ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» սեպտեմբերի 2012թ. N 901

ք. Արմավիր

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի „բ" ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի զեկուցագիրը ,,Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի Գավաթի'' խաղարկության 4-րդ եզրապակիչ փուլի մրցումներին մարզային փուլում հաղթող ճանաչված Հայթաղի միջնակարգ դպրոցի թիմի մասնակցությունն ապահովելու նպատակով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը հատկացնել 300 000 /երեք հարյուր հազար/ դրամ,թիմին հանդերձանք գնելու և ճանապարհածախսի համար:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին /Փ. Կարապետյան/՝ սահմանված կարգով իրականացնել գումարի վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*